

Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ում 02.10.2023թ. ժամը 11⁰⁰–ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է.Մանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ

Ե.Բաղդասարյան–ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով

Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. 400 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի ձեռքբերման գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Կայանի արտադրական կարիքների և տրանսպորտի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ձեռք բերել ինդուստրիալ յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2023թ. չորրորդ եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով (գեկուցագիր № 67, 12.09.2023թ.):

400 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՁԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀՁ-ՊԸ-ԻՅ-16/02.10.23** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու

հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ	լիտր	400	ՀրազՋԷԿ ԲԲԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ	1700դր՝ ներառյալ ԱԱՀ-ն
	լիտր	400	ՀրազՋԷԿ ԲԲԸ	2. Մոսէսոն ՍՊԸ	1750 դր՝ ներառյալ ԱԱՀ-ն

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխանող և նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց**.

1. ՀՋ-ՊԸ-ԻՅ-16/02.10.23 ծածկագրով 400 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ին:
2. Կնքել պայմանագիր «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1700 դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն, 400 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Է. Սանամյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան